

Վ. ԿՈՐՈԼԵՆԿՈ

# ԳԱՎԱԾ ՏՊԱՆ

Վահագուստի  
Վ. ԿՈՐՈԼԵՆԿՈ

# Գ Ե Վ Ա Ծ Տ Ղ Ա Ն

## Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Übersicht

Վ. Պ. ՎԱՍԻԼԵՎԱ. ԱՅԻ

skor



QBSPUS

ՀԱՅԵՐ ԿԿ ԿԻՑ ՄԱԿԱԳՈՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1937



ՓՈՔՐԱՀԱՍՈՒԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Ռ. Զ. Ա Ր Ե Ա ն

Տեխ. խմբագիր՝ Լ. Ռ Ի Ա Բ Ե Ա ն

Սրբագրիչ՝ Ռ. Ն Ե Վ Ե Ա ն

Գլամիլսի լիազուք Կ-4535, հրատ. 3982

Պատվեր 251, տիրաժ 3000

Պետհրատի տպարան, Յերևան, Ա Կնունյանցի, 4

Այն տունը, վորի մեջ մենք ապրում ելինք, գտնվում  
եր դեպի փոքրիկ հրապարակը տանող նեղ նրբանցքում։  
Ալդ հրապարակում միանում ելին մի քանի փողոց, վորոն-  
ցից յերկուսը տանում ելին դեպի գերեզմանատուն։

Այդ փողոցներից մեկը կոչվում եր «խճուղի»։ Այդ  
փողոցով անցնում ելին փոստատար սալլակները զան-  
գակները կապած, և վորովհետեւ, հենց այդտեղ եր վերջա-  
նում քաղաքի ամենամարդաշատ մասը, դրա համար ել  
լեռբեմն փոստատարները կանգնեցնում ելին ձիերը և ար-  
ձակում զանգակները։ Այդտեղից արդեն փոստը շարժ-  
վում եր զրընդցով, վոր աստիճանաբար թուլանում եր,  
անընդհատ հեռանալով ու նվազելով, մինչև վոր սալ-  
լակն ել, նույնպես անընդհատ փոքրանալով, դառնում  
եր մի փոքրիկ կետի չափ։

Յես ու յեղբայրս մեր նրբանցքի անկյունից կամ  
ցանկապատի վրայից հաճախ նայում ելինք, թե ինչպես  
են անհայտանում հեռվում փոստի սալլակները, բարձր  
հրեական «բալագուլները», ծանրաշարժ հանրակառքերը,  
պյուղացիների սալլերը։

Այդ փողոցը քանի հեռանում, այնքան բարձրանում  
եր, այդ պատճառով ել այն բոլորը, ինչ վոր մոտենում  
եր քաղաքի կենտրոնին, կարծես գլորվում եր ներքե...  
Յեվ յես դեռ հիմա ել հիշում եմ այն զարմանքի զգա-  
ցումը, վոր համակեց ինձ իմ ամենավաղ մանկութան ժա-

մանակ, լերբ հորիզոնի լետից դուրս լեկած վոքրիկ քառակուսի մի բիծ սկսեց մեծանալ, մոտենալ և մի վորոշ ժամանակից հետո զորացուները բռնեցին ամբողջ փողոցը, լցնելով այն հաղարավոր վոտքերի դոփունով և սվագախմբի խլացուցիչ հնչուններով: Զինվորները զլըխներին կլոր դդակիկներ ունելին առանց հովարների և հագել ելին խիստ մաշված կարճիկ բաճկոնիկներ: Սպառերի զլիններին կային կոշտ կիվերներ իրենց փետրափլնչերով և մետաղիա կոներով: Նրանք բոլորը գնում ելին համաշափ, վոտք-վոտքի և ինչ-վոր խստասիրա բան կարագի համաշափ շարժման մեջ:

Բոլորն ասում ելին, վոր նրանք վերադառնում են «Ակաստոպոլիս մոտ» մղած պատերազմից:

Խճուղով անցնում ելին նաև կալանավորներ, զընգացնելով իրենց շղթաները, խակ մի անգամ ել անց կացրին մի մռայլ մարդու «առեւտրական պատիժ»\* տալու համար: Առջեռով գնում եր զինվորների մի դասակ և չորս թմբկահարներ խոժոռ ու համաշափ թմբկահարում ելին... Թմբկահարների լուրաքանչլուր քալին թմբուկները վեր ելին բարձրանում նրանց ձախ վոտքի վրա, բայց թմբուկների ձախնը հոսում եր առանց ընդհատվելու, նույնքան համաշափ ու չարագուշակ: Նրանց լետից գնում եր սալը, վորի վրա գրված եր մի բարձր նստարան և ալդ նըստարանի թիկնակին կապել ելին նրա վրա նստած մարդու գեպի լետ տալած ձեռքերը: Նրա բաց զլու խը խիստ կախ եր ընկել ու տարութերվում եր, լերբ կառքը ցնցվում եր սալահատակի վրա, խակ կրծքին թեք կախված եր մի տախտակ վրան սպիտակ տառերով գրված: Յեվ ալդ ամբողջ մռայլ կերպարանքը բարձր եր լողում ամբոխի վրալով,

\* «Առեւտրական պատիժ»—այդպես կոչվում եր, ցարական թուսաստանի որենքներով, խարաղանով պատժելը մարդաշատ առեւտրական հրապարակներում, զանազան հանցաքների համար:

կարծես իշխելով՝ մարդկալին սրբնթաց հոսանքին: Սալլի լետեկից գնուում եր զինվորների մի դասակ և խիտ խռնված շարքերով վազում եր ժողովուրդը: Մեզ, իհարկե հրապարակ չթողին, բայց սպասավոր Գանդիլոն, վոր այնտեղ եր վազել մարդկանց լետեկից, և եծ վողեորությամբ պատմում եր հետո խոհանոցում, թե ինչպես դահիճը պառկեցրեց «մարդասպաննին» պատժարանի վրա դրված իշխանուկի վրա, ինչպես ձգում-բացում եր մտրակը և դրա հետ իբր թե ասուում:

— Հայրդ ու մայրդ քեզ չեն խրատել, դե յես կլսըատեմ քեզ:

Հետո բացականչում եր՝ «Զգույշ, կվառեմ», և ապա ամբողջ հրապարակով մեկ լսվում եր մտրակի շաշլունը և պատժվողի անբնական գոռոցը: Մեր ծառալող կանանցից շատերը նույնպես բացականչում ելին ու խաչակընքում լերեսները:

Ընդհանրապես շատ հետաքրքիր, նոր և լերենմն սարսափելի բաներ ելին շարժվում այդ լերկար, ուղիղ խճուղվ...

Մեր բակը հարմար ու խաղաղ բակ եր: Մեծ վողոցներից նա անջատված եր լերկու քարե աներով: Այդ քարաշեն տներից մեկում ապրում ելին մեր տան տերերը, վորոնց բնակարանն ու կահավորումը չափազանց ճոխ և հարուստ ելին թվում ինձ: Դարբասը բացվում եր նըրբանցքի վրա և նրա վրա ցածր կախված իրեն հին, արծաթագույն կաղամախու խիտ ճշուղերը: Տանտիրոջ սալլակի կառապանը, վոր իր գորշ լիվրեցով շատ նշանավոր տեսք ուներ, դարբասից ներս մտնելիս ամեն անգամ ստիպված եր խիստ կռանալ վորպեսպի, ճյուղերը վայր չգցեն նըրբաֆթալավոր ժապավենով ու հանգույցով բարձր գդակը: Մեր կողաշենքը կանգնած եր բակի խորքում, և մի կողմից միանում եր քարե տանը, իսկ նըր մկուս կողմից ձգվում եր խիտ ալգին:

Մեր բակի կրանքը խաղաղ եր անցնում, միանգամ  
ընդիշտ սահմանված կարդ ու կանոնով: Իմ մեծ յեղբարը  
յերկուս ու կես տարով մեծ եր ինձնից, իսկ փոքրը հա-  
զիվ մի տարով եր փոքր: Յեվ դրանից եր, վոր, բնակա-  
նաբար, փոքր յեղբորս հետ մենք սաստիկ մոտիկ ելինք:  
Վեր ելինք կենում մենք շատ վաղ, յերբ յերկու տներն  
ել դեռ պինդ քնած ելին լինում: Միայն ախոռում ձիա-  
պանները մաքրում ելին ձիերին ու տանում նրանց դեպի  
ջրհորը: Յերբեմն մեզ թույլ ելին տալիս բռնել նրանց  
անձերից, և ալդ վստահությունը սաստիկ բարձրացնում  
եր մեզ մեր սեփական աչքում:

Զիապաններից հետո արթնանում ելին աղախիններն  
ու գնում սարայ՝ վայտ բերելու:

Ժամն ութ անց կես բերում ելին հորս բրիչկան  
և նա գնում եր ծառալութիան: Այդ կրկնվում եր ամեն  
որ և մեզ բնության որենք եր թվում...

Ցուրաքանչչուր առավոտ տանտիրոջ քարե տան նկու-  
ղային հարկի անկյունի սենյակում, վորոշված ժամին ան-  
փոփոխ տեղի յեր ունենում միենուն յերկու լթը: Սկզբում  
ցնցվում եր ծածկափեղկի յերկաթյա փականը և մեկը  
ներսից դուրս եր հրում բոլտը, վորով ծածկափեղկերը  
փակվում ելին գիշերը: Յերկաթյա շերար, կարծես կեն-  
դանացած, լետ եր քաշվում, հետո զբնգալով վալը ընկ-  
նում, և ալդ ժամանակ ինչ վոր մեկի ձեռքն ուղանցքի  
միջով վերջնականապես բացում եր ծածկափեղկերը: Դրա-  
նից հետո ինքը լուսամուտն ել, վոր գետնի հետ հավասար  
եր, բացվում եր և նրա մեջ հայտնվում եր գիշերային  
թասակով ծածկված մի մարդու գլուխ:

Դա մի անվոր եր, հասակավոր ամուրի մի մարդ, —  
պան Ուլյանիցկին: Նա գուրս եր հանում իր փոքրիկ մո-  
րուքով և սապատավոր քթով սուր պրոֆիլը և անհանգիստ  
հայացք եր դցում մեր կողաշենքի լուսամուտների վրա:

Մեծ մասամբ մեր ծածկափեղկերը դեռ փակ ելին լինում։ Համողվելով այդ բանում, պան Ուլյանիցկին նորից սուզվում եր իր սենյակի խորքը և շուտով լուսամուտի գոգին արդեն ամբողջովին լերեւում եր նրա փոքրիկ, չոր կերպարանքը, գիշերալին թասակով և խալտարղետ խալաթով, վորի տակից լերեւում ելին տակի սպիտակեղենն ու հողաթափները՝ բորիկ վոտքերին։

Մենք գիտելինք, վոր նրա անհանգիստ հայացքները վերաբերում են՝ զիխավորապես մեր տանը՝ նա չեր ուզում, վոր իր առավոտավա կիսահագուստով նրան տեսնի մեր հորաքուլըներից մեկը, վորին նա լերեմն ուղեկցում եր յեկեղեցի։ Ուլյանիցկու կերպարանքն այդ առավոտավաժամինն իսկամասկես վոր շատ անդուրեկան տեսք եր ունենում, խալաթը ճմլված ու կտրտված, հողաթափները մաշված, սպիտակեղենը՝ կեղառա, իսկ բեկմերը՝ խոհիվ։

Նորից սուզվելով իր սենյակի մեջ, պան Ուլյանիցկին սկսում եր իրեն կարգի բերել։ Դա մի բարդ և լերկարատեարարողություն եր, առանձնապես սափրովելու գործողությունը, վոր հիշեցնում եր մի սրբազն արարողություն։ Մենք իրավունք ելինք վայելում այդ ժամանակ կանգնել գուրսը՝ բաց լուսամուտի առջև, իսկ մեր լեռնեց մեկ մեկ ել նայում եր քրոջս փոքրիկ լերեսը։ Պան Ուլյանիցկին վոչինչ չուներ դրա դեմ և միայն, յերբ սկսում եր սափրովել, զգուշացնում եր մեղ, վոր հանդիսատ մնանք, վորովհետեւ կանոնների մի փոքրիկ խախտումն այդ կարեոր բոպելին, վատանգ ե սպառնում նրա կանքին։

Մենք սրբությամբ կատարում ելինք այդ պայմանը և կրիտիկական բոպելին, լերբ պան Ուլյանիցկին, բռնելով իր քթի ծալըից ու լեզվով թուշը ներսից ուսեցնելով, զգուշացնում եր ածելին, այնպես, վոր բեկմերը շմասի, կամ լերբ սափրում եր մորուքը կոկորդի մոտ, մենք աշխատում ելինք նույնիսկ շունչներս պահել

մինչև վոր նա վերջին անգամ սրբում եր ածելին և  
հավաքում ածլասարքը: Դրանից հետո նա լվացվում եր,  
վկան ու այտերը մոլեզնաբար տրորում սրբիչով, պուդրի  
յեր քսում յերեսին, ֆիքսատուարում եր ու ձգում բե-  
խերի ծալըերն և ապա անցնում շիրմալի լետեր: Քառորդ  
ժամ հետո նա դուրս եր գալիս այնտեղից արդեն անհա-  
նաչելի, լասամանի գույնի կարճ անդրավարտիկով, լաքած  
կողիկներով, բաց գույնի ժիշետով և կլորացըած ֆալդե-  
րով կապուտ սերթուկով: Նրա յերեսն ել կարծես թե  
կոկված եր լինում՝ տրորվածությունն ու կնճիռներն ան-  
հայտանում ելին: Այդպիսի նորոգված տեսքով նրա յե-  
րմալը մեղ վրա միշտ ուժեղ տպավորություն եր գործում,  
և նրան այդ դուր եր գալիս: Յերբեմն, կոճկելով իր սի-  
րունիկ սերթուկի վերջին կոճակը, նա նայում եր մեղ  
պարզ նկատելի ինքնազոհությանը և ասում:

— Հը՞ վհնց, ի՞նչ...

Մեր հարաբերությունները պան Ուլյանիցկու հետ այդ  
ժամանակ շատ լավ ելին: Նա ծիծաղելի յեր թվում իր  
ալծի մորուքով և կարճ, նեղիկ անդրավարտիք հազած  
բարակ տոտիկներով: Բայց այդ բոլորն անմնաս բաներ  
ելին, իսկ ամենորյա նորոգման գործողությունն առա-  
ջացնում եր վոչ միայն բնական հետաքրքրություն, այլ և  
վորոշ պատկառելի զարմանք:

Սակայն վորոշ ժամանակ անցած՝ մեր հարաբերու-  
թյունները պան Ուլյանիցկու հետ փչացան:

Մի գեղեցիկ որ նա գտավ, վոր իր համար այնքան  
ել հարմար չի ծառա չունենալը: Այդ բանն ի նկատի ունե-  
նալով նա իրեն ծառա վարձեց տանտիրոջ աղախնի տղա-  
լին, Պետրիկին: Աղախինը, «պանի Ռիմաշևսկայան», վորին  
անվանում ելին լյուբա, շատ հաստ և ճղճղան կին եր:  
Ոռհասարակ նրա մասին ասում ելին, թե դա կին չե,  
այլ դե ե: Իսկ նրա տղան հանդարտ տղա յեր ծաղկա-



Նա նայում էր մեզ պարզ նկատելի ինքնագոհությամբ և ասում.  
— Հը՞ վճնց, ի՞նչ...

տար, գունատ լերեսով, և բացի այդ տառապում եր քայ-քայիչ ջերմախտով։ Սաստիկ ժշտա Ուլյանիցկին աժան գնով եր վարձել նրան, և տղան ծառայության մտավ անկյունի սենյակում։

Վերջացավ ալդ մեծ խալտառակությամբ։ Մի գեղեցիկ որ Լյուբան, ձեռքերը կողքին կանթած, հայնոյում եր Ուլյա-նիցկուն ամբողջ բակով մեկ և բղավում, վոր նա իր տղա-յին կարող ե պաշտպանել, վոր սովորեցնել, ինարկե, կա-րելի լե, բայց վոչ արդակե... «Այ, նայեք, բարի մարդիկ, ամբողջովին կապտեցրել ե տղի մեջքը»։ Յեվ դրա հետ Լյու-բան այնպես կատաղաբար վեր քաշեց Պետրիկի շապիկը, վոր նա ճշաց ցտվից, կարծես նրա ձեռքերում վոչ թե իր տղան եր, այլ ինքը Ուլյանիցկին։

Վերջինս նստել եր իր սենյակում, և զուրս չեր գալիս բարկացած կնկա զոռգոռոցներին, իսկ մլուս որն ելի յերեաց լուսամուտի դողում։ Հաղնվելու ժամանակ նա մեզ բացատրեց, վոր Պետրիկը — վաս, վաս, վաս տղա յե։ Յեվ նրա մայրն ել ստոր կին ե... և վոր նա հիմար ե, իսկ նա, Ուլյանիցկին «կճարի իր համար մի ուրիշ տղա, ավելի լավը»։ Նա բարկանում եր, կըկնում խոսքերը և նրա այծի մորուքը տմբտմբում եր բավական արտահայ-տիչ կերպով։

Շուտով նա ժամանակալորապես դնաց գլուղ, վորտեղ դեռ կենդանի լեր նրա ծերունի հալրը, և լերը վերադար-ձավ, նրա լետեկից գալիս եր մի սալլ գլուղական զանազան մթերքներով լիքը, իսկ սալլի վրա նստած եր 10-11 տարե-կան մի տղա, կարճլիկ կուրտակայով, թուխս գեմքով և կլոր աչքերով, վոր վախեցած նայում ելին իրեն անծանոթ շրջապատին։ Այդ որսվանից տղան բնակվեց Ուլյանիցկու սենյակում, մաքրում եր, ջուր բերում և ամանները ձեռ-քին գնում ճաշաբան՝ ճաշ բերելու։ Նրա անունը Մա-մերտ եր, կամ փաղաքշական՝ Մամերիկ, և շուտով բակում

համանի լեղավ, վոր դա վորբ եւ և այն ել ճորտ, վորին չգիտես հայրն եր նվիրել Ուլյանիցկուն, թե ինքն եր գնելի իր համար վորեե կալվածատիրոջից:

Յես բացաբակապես չեմ հիշում, վոր «տղա դնելու» միտքն ինքն ըստ ինքան վորեե գիտակցական բողոք կտո՞ւ դժգոհություն առաջացներ իմ մեջ: Բայց, համենայն գեպս, այդ հանդամանքը նորեկին հետաքրքիր առարկա եր դարձնում, վորովհետեւ մենք անեն տեսակի տղաներ տեսել եինք, իսկ գնված տղա դեռ վոչ մի անդամ չելինք տեսել: Յեվ դրա հետ, սակայն, մի ինչ վոր անորոշ բան այնուամենայնիվ շարժվում եր մեր մեջ:

Դժվար եր ծանոթություն հաստատել գնված տղայի հետ: Նույնիսկ այն ժամանակ, յերբ պան Ուլյանիցկին պնում եր ծառայության, նրա տղան փակվում եր սենյակում և զուրս եր գալիս միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ աղրը դուրս տանելու, ջուր բերելու, ճաշ բերելու համար: Յերբ մենք պատահած դեպքում մոտենում ելինք նրան և խոսեցնում, նա զայլի ձագի պես եր նայում, վախլորած ցած եր գցում իր սե, կլոր աշքերը և աշխատում շուտ հեռանալ, կարծես մեզ հետ խոսելը նրա համար մի մեծ վտանգ եր ներկայացնում իրենից:

Կամաց-կամաց, սակայն, մոտիկությունն սկսվում եր: Տղան դադարեց աչքերն իջեցնել, կանգ եր առնում, կարծես խոսակցելու ցանկությունը գալթակողեցնում եր նրան, կամ ժպտում եր, մեր մոտից անցնելիս: Վերջապես, մի անդամ, հանդիպելով մեզ տան անկունի լետեր, նա կեղտու դույլը դրեց գետին և մենք սկսեցինք խոսել իրար հետ: Հասկանալի լե, վոր ամենից առաջ մենք սկսեցինք հարցնել, թե՝ «անունդ ինչ ե», «քանի տարեկան ես», «վորտեղից ես լեկել» և այլն: Տղան հարցըց մեզ իր հերթին, թե մեր անունն ինչ ե և... մի կտոր հաց խնդրեց:

Շուտով մենք բարեկամացանք: Ուզանիցկին վերապառնում եր միշտ վորոշված ժամին, լարված մեքենացի նման, և մենք կարող ենքնք նույնիսկ մտնել նրա սենյակը, առանց վախենալու, թե նա կրոնի մեղ սենյակում: Միաժամանակ մենք խմացանք, վոր մեր հարեանը ճիշտ վոր շատ չարասիրա ժլատն և և սիրում ե տանջել: Նա չի կերակրում Մամերիկին, ալ միան լիդել և տալիս դատարկ առանները և կրծել հացի կեղևները, և արդեն յերկու անգամ սաստիկ գնքուր և նրան առանց վորսե հանցանքի: Վորպեսզի տղան դուր չնստի ու ժամանակ չանցկացնի զանազան կապը կարածների հետ (մենք գլխի ընկանք, վոր այդ հաճելի անվան տակ Ուզանիցկին ի նկատի ուներ մեղ), նա նրան պատվիրում ե վետուր քաշել բարձերի համար և քաշված փետուրը ծախում է: Մենք հաց ելինք բերում Մամերիկին, վոր նա ուտում որ մեծ ագահութեամբ:

Յեկ տխուր սև աչքերի հայացքները, և նրա թուխ դեմքի տխուր արտահայտությունը, և իր պատմածները, և այն ագահությունը, վորով նա հարձակվում եր մեր բերած ուտելիքի վրա, — այդ բոլորը մեղ ներշնչում եր ինչ վոր հուզիչ, սուր խղճահարություն դեպի գնված տղան և չարություն՝ դեպի նրա տերը: Յեկ այդ չարությունը մի առավոտ արտահայտվեց մեր կողմից:

Խեղճ Մամերիկին ինչ վոր հանցանք եր գործել և գեռ նախընթաց որը նրան տանջում եր այն նախազգացումը, վոր պանն անզատճառ ծեծելու յի իրեն: Առավոտան Ուզանիցկին դուրս լեկավ շիրմալի լետեկից վոչ իր սովորական ինքնագոն փալու, ալ նրա լերեսին ինչ վոր խորհրդավոր արտահայտություն կար: Նա առանց սերթուկի լեր, իսկ ձեռքերը պահել եր լետեկը: Կանգ առնելով շիրմալի մոտ՝ նա կանչեց Մամերիկին և հրամակեց նրան ինչ-վոր բան բերել: Բայց հենց վոր տղան լերկչոս կերպով մոտեցավ, Ուզանիցկին կատվի արագությամբ

բռնեց նրան, կռացրեց, սեղմեց գլուխն իր ծնկերի արանքում, իջեցրեց անդրավարտիքը և ողում սուլեց ճիպոտների փունջը: Մամերիկը հուսահատ ճշաց ու սկսեց նետվել դես ու դեն:

Մեր ընտանիքում առհասարակ փափուկ վերաբերմունք կար դեսի իրար, և մենք դեռ լերբեք չելինք տեսել այդպիսի դաժան պատիժ: Մենք լուսամուտի առջև նույնպես ճշոց բարձրացրինք, թփթփացրինք վոտներս և սկսեցինք հայնոյել Ուլյանիցկուն: Բայց Ուլյանիցկին ավելի ու ավելի յեր կատաղում: Նրա դեմքը վատ արտահայտություն ստացավ, աչքերը դուրս եցին ընկել, բեխերը կատաղաբար ցցվել եյին և ճիպոտներն անընդհատ սուլում ելին ողում:


Շատ հավանական եր, վոր մեր լացը կփոխվեր հիստերիալի, բայց այդտեղ մեզ համար անսպասելի մի դեպք տեղի ունեցավ: Ուլյանիցկու լուսամուտին ծաղկամաններ կալին, վորոնք նա մեծ հոգատարությամբ խնամում եր: Ամենից ավելի մոտիկ կանգնած եր նրա սիրելի հավերը: Ինչ վոր հանկարծակի վոգենրության մեջ, մեր փոքրիկ քույրիկը վերցրեց հափրուկն ու ամանի հետ միասին գցեց հատակի վրա: Ամանը ջարդվեց, հողը ծաղկի հետ միասին դուրս թափվեց: Պան Ուլյանիցկին մի ակընթարթ անշարժացավ, հետո թողեց Մամերիկին և մեզ համար անսպասելի կերպով նրա կատաղած յերեսը յերևաց լուսամուտում: Մենք զրկեցինք քըոջս ու սկսեցինք փախչել դեպի մեր պատշգամբը, վորտեղ և նստեցինք, զգալով մեզ անվտանգ մեր սահմաններում: Պան Ուլյանիցկին, իսկապես, կանդ առավ իր լուսամուտից վոչ հեռու և, ճիպոտները լետեր պահած՝ սկսեց մեզ կանչել քաղցր ձայնով, խոստանալով տալ մեզ մեկ սեկական կանֆետ իբրև հաշտության նշան: Բայց խորամանկությունը չափազանց ակնհայտ եր և մենք մնացինք մեր տեղը, բավական սառնասիրտ նայելով նրա խորամանկ շարժ ու ձեին...

Այդ նույն որը, կամ առհասարակ գեպքից անմիջապես հետո մի տոն որ, մենք մորս ու հորաքրոջս հետ զնում ելինք փողոցով և մեզ մոտեցավ պան Ռւլանիցկին։ Նա հազնված եր, ինչպես միշտ, պճնասիրաբար, նրա կոշիկ-ները փալում ելին շլացուցիչ փալով, բեխերի ծալըերը ցցվել ելին լերկու մետաղալարի նման և սերթուկի ողում մի ծաղիկ կար։ Յերբ նա մոտենում եր, իմ սիրաը մի փոքր թրթուաց, վորովհետև լես հավատացած ելի, վոր նա կրանդատվի մորս մեր ցուցի համար։ Բայց խիստ զար-մացանք, վոր նա վոչ միայն չգանդատվեց, ալլ և բռնեց մեզնից մեկի ծնոտն ու սկսեց կեղծ-քաղցրավուն ձախով դովարանել մորս առաջ «սիրելի ճուտիկներին», վորոնց հետ նա շատ բարեկամական հարաբերությունների մեջ ե։

Այդ անհաջող վարժունքը նախ մեզ մեծ արհամարանք ներշնչեց, և լերկորդ՝ մեզ ցուց տվեց, վոր մի ինչ-վոր պատճառով Ռւլանիցկին թագցնում և մորիցս մեր միջև պատահած ընդհարումը։ Իսկ լիթե թագցնում ե, ուրեմն և մեղավոր և ճանաշում իրեն։ Այդ կողմից մենք մեզ բոլորովին ապահով համարեցինք, և մեր ու Ռւլանիցկու միջև սկսվեց մի պատերազմ։

Յերեխաները լերսեմն զարմանալի դիտունակություն են ունենում և զարմանալի կերպով ոգտագործում են այն։ Պան Ռւլանիցկին շատ տարորինակություններ ուներ. նա ժլատ եր, չեր կարող տանել, լերը իր սենյակում և սեղանի վրա առարկաների տեղերը փոփոխվում ելին և վախենում եր կտրող գործիքներից։

Մի անդամ, լերը նա ամբողջովին խորասուզված եր սափրվելու գործողության մեջ և, քթի ծալրից բռնած, լեզ-վով գուրս եր հրել սափրվող այտը, մեծ լեղբալրս ողանցքի միջով յետ արեց լուսամուտի փականը, զգուշությամբ իջավ սենյակն ու բացեց մուտքի գուռը։ Ալդպիսով, ապա-հովելով իր նահանջի ճանապարհը, նա սկսեց ինչ-վոր



Լուսամուտի առաջ կանգնած, մենք սարսափած սպասում եյինք,  
բե ինչ պիտի լինի:

վալրենի պար պարել սենյակի մեջտեղում՝ ցատկուում եր, ծոմովում, վոտքերը գցում գլխից վերե և բզավում վալրենի ձախով՝ «Հոպ, շրջի, տա նա նա»...

Լուսամուտի առաջ կանգնած մենք սարսահիած սպասում ենինք, թե ինչ պիտի լինի: Բայց մենք խիստ զարմացանք, չերբ տեսանք, վոր շարաբաստիկ ասպետը չի շարժվում տեղից: Նրա լերեսի վրա վոչ մի մկան չշարժվեց: Նա նույնալիսի հոգատարությամբ ըսնել եր քթի ծայրից, ածելելով բեխերի շուրջը, և նույն ձևով ուռեցնելով իր արտը: Այդ ժամանակ, տեսնելով, վոր ածիլվելու արարողությունը գեռ նոր և սկսվել էս ու փոքր յեղբայրս մատանք սենյակ և միացանք մոլեզին պարին: Դա մի ինչ վոր մանկական կատաղություն եր՝ հատակի վրա ելին նետվում աթոռները, կախարանի վրայի շորերը, խողանակները: Մաճերիկը սարսափած նայում եր այս աշխարհի վախճանին իր անմիտ չուած կրոր աչքերով: Միայն պան Ռւլանիցկին լիակատար սառնասրտություն եր պահպանում, անձեռոցիկը կապած կրծքին մինչև վիզը, ածելին ձեռքին և դեպի փոքրիկ հաւելին թեքած աչքերով: Յեկ միայն ամենորյա ճշտապահությամբ վերջացնելով սափըրվելը և զգուշությամբ դնելով ածելին պատկանի մեջ, նա հանկարծակի պոկվեց տեղից ու վաղեց դեպի ճիպոտները: Մեծ յեղբայրս ծլկվեց դեպի բաց դուռը, իսկ մենք յերկուսով, վախեցած կատուների նման, թռանք դեպի լուսամուտը: Յես արդեն պատուհանի զոգումն ելի, յերբ ճիպոտները սուլեցին հենց իմ ականջի մոտ և առանց ցավեցնելու ահեցին մեջքիս վրալով...

Այդ որվանից պան Ռւլանիցկին սափրվելու պատրաստվելիս, խիստ հոգատարությամբ ծածկում իր լուսամուտները: Բայց փեղկերը հին ելին, իսկ փականները վատ ամրացված: Տեսնելով, վոր Ռւլանիցկին արդեն սկսել է սափրվել, մենք համարձակ մոտենում ելինք լու-

սամուռախն, մի փոքր լեռ անում ողանցքը, և գոյացած ձեղքից ներս տանելով բարակ փալտիկներ, նրանց ծարբով վայր եթինք գցում փականները: Ինչով բացատրել այդ, թես չգիտեմ, իերեկի նրանով, վոր նա փախենում եր կտրող գործիքներից, բայց յերբ ածելին ձեռքն եր առնում, Ուլլանիցկին արդեն չեր կարողանում ընդհատել դժվար գործը մինչև վերջացնելը: Յերբ մենք փորձում ելինք ավազակաբար ներս մտնել նրա սրբավայրը, նա միայն թեքում եր մի աշքը և նրա սառած յերեսին լերեսում եր տագնապալից բարեկության արտահայտությունը:

Յերբ մեզ հաջողվում եր բացել փականը, լուսամուտն ազնուկով բացվում եր և ծեր տապետի սենյակում սկսվում եր վայրենիների պարը:

Մի առավոտ պան Ուլլանիցկին նորից յերեսց լուսանուտի մեջ, և ապա, մոտենալով մեր պատշգամբին, ու ինչ-վոր առանձին ձևով դիտելով մեր յերեսները, նա սկսեց հավատացնել, վոր նա, ճիշտն ասած, շատ, շատ և սիրում թե մեզ և թե իր սիրելի Մամերիկին, վորի համար նա նույնիսկ ուզում ե մի նոր կապույտ կուրտիկա կարել տալ, պղնձե կոճակներով, և խնդրում ե, վոր մենք նրան ուրախացնենք այդ լուրով, յեթե վորեն տեղ պատահաբար հանդիպենք նրան:

Բանից դուրս յեկավ, վոր գնված տղան անհայտացել եր:

Մինույն որը փոքր յեղբայրս խորհրդավոր կերպով դուրս կանչեց ինձ սենյակից և տարավ ցախատուն: Այստեղ մութ եր, բայց յեղբայրս համարձակ առաջ գնաց և, կանգ առնելով մեջտեղում, շվացրեց: Սկզբում ամեն ինչ լուռ եր, հետո մի բան շարժվեց անկյունում, ցախերի արանքում, և մեր առաջն յեկավ Մամերիկը: Բանից դուրս յեկավ, վոր նա փալտի կուրտի և պատի արանքում մի ընի նման բան և սարքել իր համար և արդեն յերկու որ



ե, ինչ ապրում ե այդտեղ: Նա ասում եր, վոր ապրել «վոչինչ, կարելի յե», միայն ուտել ե ուզում և գիշեր-ներն սկզբում մի քիչ վախենում եր: Հիմա սովորել ե: Յերբ մենք հաղորդեցինք նրան, թե Ուլյանիցկին սկըռում է նրան և ուզում ե կուրտկա գնել, նա վճռականորեն պատասխանեց.


— Զեմ գնա: Կընկնեմ ջրաղացի տակը կիսեղգվեմ, չեմ գնա:

Այդ որվանից մենք ունելինք մեր գաղտնիքը: Յերեկոները մենք Մամերիկի հանար ուտելու բան ելինք բերում և միասին դուրս դալիս զրոսնելու բակի մեկուսի անկլուններում: Դա շարունակվում եր դեռ մի քանի ոք ել, մինչև վոր մայրս նկատեց մեր խորհրդավոր փոխուց-ները: Նա ամեն ինչի մասին մեղնից հարց ու փորձ արեց և պատմեց հորս: Տղայի վիճակով հետաքրքրվեցին մեծերը և պան Ուլյանիցկուն կանչում ելին ինչ վոր բացատրություններ տալու, նույնիսկ վերե, տանտիրուհու, պանի կալյանովսկու մոտ: Մենք հոգատարությամբ պահպանում ելինք ապաստարանի զադանիքը, վորովհետեւ շատ պինդ լերգվել ելինք, վոր այդ գաղտնիքը վոչ վոքի չենք հայտնի աշխարհիս լերեսին: Այդ պատճառով ել, յերք վերեսում անձնատուր լինելու պայմանները մշակվեցին, ապա բանակցությունները շարունակվեցին մեր միջոցով, Մամերիկը վերջապես, վճռեց անձնատուր լինել իսկ Ուլյանիցկու իշխանությունը սահմանափակված եր հասա-ըակական կարծիքով: Ամբողջ բակին հայտնի եր, վոր պանի կալյանովսկայան սպառնացել եր Ուլյանիցկուն «վոնդել անկլունի սենյակից»:

Մի քանի ժամանակից հետո, սակայն, նա ինքն ել հանկարծակի գնաց ինչ վոր տեղ: Գնված տղան ընդմիշտ անհայտացավ ինչ-վոր տեղ, լայնարձակ, անհայտ աշխար-հում և նրա հետադա վիճակը մեզ անհայտ մնաց:







ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

054.

В. КОРОЛЕНКО  
КУПЛЕННЫЙ  
МАЛЬЧИК  
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.